МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

№ 06/431 «16» մարտի 2023թ.

«Թեյստի Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն
Վարդան Աբգարյանին
(ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ,
Նորաշեն թաղ., 14 շենք, բն. 22)
էլ. փոստ՝ tastygroup1@mail.ru

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/02-4» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Թեյստի Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 04.02.2023 թվականին կնքվել է ապրանքի մատակարարման թիվ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/02-4» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:»:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել՝ «2023թ.-ին համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10

կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում համաձայնագրի կնքման օրվանից՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի:»:

Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պատվիրատուն 17.02.2023թ.-ին gnumner@ysu.am էլեկտրոնային փոստի հասցեից մասնակցի tastygroup1@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է համաձայնագիր կնքելու մասին ծանուցում:

Սակայն «Թեյստի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով սահմանված ժամկետում, այն է՝ 13.03.2023թ.-ը ներառյալ Գնորդին չի ներկայացվել կնքված համաձայնագրի օրինակները:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը որոշեց՝ միակողմանի հրաժարվել 04.02.2023 թվականին կնքված ապրանքի մատակարարման թիվ «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/02-4» ծածկագրով պետական գնման պայմանագրից՝ համարելով այն լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք մինչև 27.03.2023թ.-ը ներառյալ Հավելված 3.2-ով և Հավելված 4.1-ով տրված տուժանքի մասին համաձայնագրերին կից ներկայացված վճարման պահանջագրերի 13-րդ կետում նշված շահառուի հաշվի համարին փոխանցել նույն պահանջագրերի 14-րդ կետում նշված որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները ամբողջությամբ, իսկ վճարման կտրոնների բնօրինակները ներկայացնել ԵՊՀ գնումների կազմակերպման վարչությանը: Վերը նշված պահանջը կատարելու պարագայում մասնակիցը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ **Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ**

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10